ՍՈՎԵՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ (1920—1925 թթ.)

Հ. Բ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

1920 թ. ապրիլի 26-ին ստեղծվեց Ադրբեջանի ժամանակավոր հեղափոխական կոմիտե, որն ապրիլի 28-ին Ադրբեջանը հռչակեց սովետական և իր վրա վերցրեց պետական բարձրագույն իշխանության ֆունկցիաները։

Ադրբեջանի երիտասարդ սովետական հանրապետության համար լուրջ խնդիր հանդիսացավ տեղերում սովետական ապարատի ստեղծումը։ Գավառներում, առանձնապես Լեռնային Ղարաբաղում, սովետական կարգերի հաստատման ու ամրապնդման գործն ընթացավ բարդ իրադրության պայմաններում։ Տեղերում սովետական կարգերի հաստատման ու ամրապնդման գործում կարևոր դեր խաղացին 11-րդ կարմիր բանակի զորամասերը։ Հանրապետությունում տիրող քաղաքական բարդ վիճակը, իմպերիալիստական նոր ինտերվենցիայի վտանգը, գյուղացիական մասսաների անբավարար կազմակերպվածությունը և այն վախը, որ կարող են շահագործող տարրերը ներս խցկվել սովետներ, ստիպեցին ժամանակավորապես ձեռնպահ մնալ գավառներում սովետների ընտրություններ անցկացնելուց։ Տեղերում ևս ստեղծվեցին հեղկոմներ։ Գավառային հեղկոմների կազմը նշանակում էր հանրապետության ներքին գործերի կոմիսարիատը, իսկ տեղամասային և գյուղական հեղկոմների կազմը՝ գավառային հեղկոմը։ Ղարաբաղի գավառում հեղկոմները ստեղծվեցին ապրիլի 29—30-ին, իսկ տեղամասային և գյուղական հեղկոմներ ստեղծվեցին մայիսի երկրորդ կեսին և հունիսին։ Սկզբնական շրջանում Ղարաբաղի գավառային հեղկոմների իրավունքները տարածվում էին միայն գավառային կենտրոնների վրա։ Մայիսի 5-ին Շուշիի գավառային հեղկոմը (միևնույն ժամանակ Ղարաբաղի հեղկոմ) կոչով դիմեց Ղարաբաղի աշխատավորներին՝ «անմիջապես ձեռնամուխ լինեն տնտեսական հարցերի կարգավորմանը»[1]։ Այդ նույն օրը հրապարակվեց նաև Ադրբեջանի կոմունիստական կուսակցության Շուշիի օկրուգային կոմիտեի կոչը՝ ուղղված Լեռնային Ղարաբաղի աշխատավոր հայ գյուղացիությանը։ Կոմիտեն աշխատավորներից պահանջում էր հակահեղափոխականների «տեռորին պատասխանել աշխատավորների կարմիր տեռորով» և կոչ էր անում «ստեղծել հեղկոմներ և թույլ չտալ, որ դաշնակցականները ներս խցկվեն սովետական օրգաններ»[2]։

Հեղկոմի և կուսակցության օկրուգային կոմիտեի կոչերը բնակչությանը հասցնելու համար գյուղերը մեկնեցին մի խումբ կոմունիստներ։ Նրանք տեղերում հրավիրում էին ժողովներ և բացատրում սովետական իշխանության դերն ու նշանակությունը, կոչ անում ստեղծել հեղկոմներ, կազմակերպել կամավորական ջոկատներ և ընդառաջ գնալ Ղարաբաղ մտած 11-րդ կարմիր բանակի զորամասերին։

---

1 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 581, թ. 55։

2 Նույն տեղում, թ. 54։

Նկատի ունենալով Ղարաբաղում ստեղծված քաղաքական և տնտեսական բարդ իրադրությունը Ադրհեղկոմի մայիսի 12-ի որոշմամբ Դադաշ Բունիաթ-զադեն նշանակվեց Ղարաբաղի արտակարգ կոմիսար, իսկ հայկական մասի համար նրա տեղակալ նշանակվեց Արմենակ Ղարագյոզյանը[3]։ Ղարաբաղի արտակարգ կոմիսարի առաջին հոգսը եղավ վերանայել գավառների հեղկոմների կազմերը, ազատվել անհարազատ տարրերից, մասսայական պայքար ծավալել դաշնակցականների ու մուսավաթականների դեմ ու օգնություն ցույց տալ Ղարաբաղ մտած 11-րդ կարմիր բանակի զորամասերին։ Մայիսի 18-ին Շուշի եկավ Սերգո Օրջոնիկիձեն, որը մայիսի 22-ին Բաքվից Վ. Ի. Լենինին հեռագրեց՝ Ղարաբաղում «հայկական և մուսուլմանական բնակչությունը ուրախությամբ է դիմավորում ռուսական կարմիր բանակին...»[4]։

Ղարաբաղի բոլշևիկները շարունակում էին պայքարը դաշնակցականների և մուսավաթականների վարած քաղաքականության հետևանքների դեմ։ Նրանք գործադրում էին հնարավոր բոլոր միջոցները՝ դրկից հայ և ադրբեջանցի աշխատավորների բարեկամական կապերն ամրապնդելու, նրանց ուժերը միավորելու և ընդհանուր թշնամուն՝ դաշնակցականներին ու մուսավաթականներին հակահարված տալու համար։ Բոլշևիկյան ուժերի ճնշման տակ, մայիսի 25-ին, Դրոյի դաշնակցական զորամասերը հեռացան Լեռնային Ղարաբաղից։ Հաջորդ օրը Վարանդայի Թազավարդ գյուղում ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի հեղկոմ՝ Սաքո Համբարձումյանի նախագահությամբ։ Երկու օր անց, հեղկոմ ստեղծվեց նաև Կարյագինոյում, որին ենթակա էին Դիզակի հայկական գյուղերը։ Այս հեղկոմները չկարողացան անմիջապես կապ ստեղծել Շուշու գավառային հեղկոմի և Ղարաբաղի արտակարգ կոմիսարիատի հետ։ Դրան խանգարեց մայիսի վերջերին Գյանջայում բարձրացած հակասովետական խռովությունը։ Մուսավաթականների այդ խռովությունը ճնշելու համար դեպի Գյանջա շարժվեցին նաև 11-րդ կարմիր բանակի Ղարաբաղում գտնվող զորամասերը։ Այդ հանգամանքն օգտագործելով Ղարաբաղի մուսավաթականներն ու դաշնակցականները գլուխ բարձրացրին։ Նրանք համաձայնության եկան «կարմիր բանակի դեմ միացյալ ուժերով պայքարելու գործում։ Այդ բանդաների շարքերում ակտիվ դեր էին կատարում նաև թուրքական և դենիկինյան սպաները (գեներալ Նուրի փաշան, սպա Քյազիմ-բեյը, գնդապետ Նիկոլաևը և ուրիշներ), որոնք շատ դեպքերում գլխավորում էին նրանց ռազմական գործողությունները ընդդեմ կարմիր բանակի և աշխատավորների»[5]։

Հունիսի սկզբին Գյանջայում բարձրացած հակասովետական խռովությունը ջախջախվեց։ Խռովարարների թափթփուկների մի մասը փախավ Թարթառ և Ադդամի շրջան։ 1918 թ. Ադրբեջանի օկուպացման թուրքական բանակի նախկին հրամանատար Նուրի փաշան, որը թաքնված էր Դաղստանում, հունիսի սկզբին մի խումբ սպաների և զինվորականների հետ շտապեց Ղարաբաղ։ Շուշի ժամանելով ծպտված, նա կապվեց կայազորի պետ՝ նախկին մուսավաթական բանակի գնդապետ Զեյնալովի հետ և հունիսի 5-ին կազմակերպեց խռովություն։ Նուրի փաշան հայտարարվեց «Ղարաբաղի դիկտատոր»։ Խռովարարները գրավեցին սովետական հիմնարկությունները, հեռագրատունը, փոստը, գանձատունը, բանտը, զորանոցները։ Ձերբակալվեցին ու բանտ

3 Տե՛ս Ադր. ՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 410, ց. 1, գ. 78, թ. 6։

4 ՄԼԻ-ի հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 4005, ց. 1, գ. 105, թ. 1։

5 «Сборник по истории Азербайджана», вып .2, Баку, 1949, էջ 314։

նետվեցին Շուշու գավառային հեղկոմի անդամները։ Սակայն, Նուրի փաշային չհաջողվեց ամուր հենարան գտնել ո՛չ Շուշիում, ո՛չ էլ քաղաքի մոտակա գյուղերում։ Քաղաքի աշխատավորության մեծամասնությունը հանդես եկավ սովետական իշխանության պաշտպանությամբ[6]։

Հակասովետական խռովությունը ճնշելու համար դեպի Ղարաբաղ շարժվեցին 11-րդ կարմիր բանակի 18-րդ հեծելազորային և 32-րդ հրաձգային դիվիզիաները։ Հունիսի 12-ի լույս 13-ի գիշերը խռովության պարագլուխները փախան Շուշիից և Կարյոգինոյի վրայով անցան Պարսկաստան։ Հունիսի 14-ի առավոտյան Շուշի քաղաքի աշխատավորները պաշարեցին բանտը և ազատեցին հեղկոմի բանտարկված անդամներին, իսկ հաջորդ օրը ժամը 17-ին աղ ու հացով դիմավորեցին կարմիր բանակի զորամասերին։ Կարմիր դյուցազուններին ողջունելու և իրենց երախտագիտական խոսքն ասելու համար ներկայացուցիչներ եկան քաղաքի շրջակա գյուղերից։ Հունիսի 16-ին Թաղավարդից Շուշի տեղափոխվեց Լեռնային Ղարաբաղի հեղկոմի նախագահ Սաքո Համբարձումյանը։ Ղարաբաղի և Լեռնային Ղարաբաղի հեղկոմների միավորումով հայ ու ադրբեջանցի աշխատավորները «կազմեցին ընդհանուր հեղափոխական ճակատ»[7]։ Սաքո Համբարձումյանն սկսեց ղեկավարել կուսակցական գավառային կոմիտեն։ Մինչև հունիսի վերջերը հեղկոմներ ստեղծվեցին Ղարաբաղի բոլոր տեղամասերում և գյուղերում։

Հեղկոմները տեղերում ամենից առաջ հաստատում էին հեղափոխական կարգ, կենսագործում սովետական իշխանության դեկրետները, աշխատավորներին համախմբում հակահեղափոխական տարրերի դեմ միասնական պայքարի։ Ղարաբաղի գավառային հեղկոմները մեծ աշխատանք տարան Ադրհեղկոմի մայիսի 5-ի՝ հողն ազգայնացնելու, մայիսի 12-ի՝ դասերը և քաղաքացիական աստիճանները վերացնելու, մայիսի 15-ի՝ լուսավորության ժողովրդական կոմիսարիատի, խղճի և ազատության մասին դեկրետները բնակչության գիտակցությանը հասցնելու և կյանքում գործնականորեն կիրառելու համար։ Ղարաբաղի արտակարգ կոմիսար Բունիաթզադեն Ադրհեղկոմի նախագահ Նարիման Նարիմանովին հաղորդեց, որ հունիսի 20-ին և 21-ին «Մի ահագին միտինգ կազմվեց Շուշու գյուղերից... Հողային հարցի համար ուրախ են գյուղացիները... Հողի և անտառի մասին մայիսի 5-ի և 15-ի դեկրետները իրագործվում են»[8]։

Հողային հարցը (որը միշտ էլ ունեցել է կենսական նշանակություն) արագորեն լուծելու, հողի վերաբերյալ դեկրետներն ու հրահանգները կյանքում իրագործելու համար հեղկոմը կազմակերպեց աշխատավորների պայքար շահագործողների՝ կալվածատերերի ու կուլակների դեմ։

Լեռնային Ղարաբաղի դաշտավայրային բոլոր հողերը գտնվում էին կալվածատերերի ձեռքին։ Այդ հողերն ազգայնացվեցին և տրվեցին Վարանդայի և Ջրաբերդի գյուղացիներին։ Սեպտեմբերի սկզբին Ջիվանշիրում ազգայնացված Նուրիբեկովի կալվածքում կազմակերպվեց խորհրդային տնտեսություն։ 1920 թ. սեպտեմբերին Ղարաբաղի հեղկոմը գավառի մետաքսարդյունաբե-

---

6 Տե՛ս Գ. Հովհաննիսյան, Սովետական կարգերի հաստատումն ու ամրապնդումը Լեռնային Ղարաբաղում, «Սովետական Ղարաբաղ», 1967, № 112։

7 «Կոմունիստ» (Բաքու), 1920, № 31։

8 Նույն տեղում, № 32։

ական բոլոր ձեռնարկություններն ազգայնացնելու վերաբերյալ որոշման նախագիծ ներկայացրեց Ադրհեղկոմին։

Տեղերում սովետական իշխանությունը ամրապնդելու և հեղկոմների դերն ու նշանակությունը բարձրացնելու ուղղությամբ Ադրհեղկոմի ձեռնարկած միջոցառումներն աշխատավորներին հասցնելու գործում մեծ դեր խաղացին Հուլիս-օգոստոս ամիսներին հանրապետության գավառներում և տեղամասերում (Շուշի, Ջիվանշիր, Ջրաբերդ) կայացած գյուղացիական կոնֆերանսները։ Հուլիսի 26-ին Շուշիում իր աշխատանքներն սկսեց Ղարաբաղի գյուղացիության առաջին համագումարը, ուր լսվեցին զեկուցումներ սովետական իշխանության ստեղծման, հողի վերաբերյալ դեկրետի իրագործման ընթացքի և այլ հարցերի մասին։ Համագումարն հատուկ ուշադրություն դարձրեց գյուղերում սովետական իշխանության և գրկից երկու ժողովուրդների՝ հայերի և ադրբեջանցիների դարավոր բարեկամական կապերի ամրապնդման հարցերին։

1920 թ. ամռանը և աշնանը ձեռնարկվեցին մի շարք միջոցառումներ, որոնց նպատակն էր իրագործել ռազմական կոմունիզմի քաղաքականությունը։ Սակայն, ի տարբերություն Սովետական Ռուսաստանի, Ադրբեջանում, այդ թվում և Լեռնային Ղարաբաղում, ռազմական կոմունիզմի քաղաքականությունն իրականացվեց ավելի սահմանափակ և տևեց շատ կարճ։ Սեպտեմբերի 24-ին հանրապետությունում մտցվեց ընդհանուր աշխատապարտադիր, որով ֆիզիկական աշխատանքը պարտադիր դարձավ բոլոր աշխատունակ մարդկանց համար։

Լեռնային Ղարաբաղում առանձնապես նորություն էին շաբաթօրյակները, որոնց մասնակցում էին համարյա բոլոր աշխատավորները։ Շաբաթօրյակների ժամանակ նորոգվում էին ճանապարհները, աղբյուրները, մշակույթի օջախները, ջրանցքները, առուներ էին փորվում, ծառատունկ էր կատարվում և այլն։ Հեղկոմներին և կուսակցական կոմիտեներին կից ստեղծված բյուրոները մեծ դեր խաղացին շաբաթօրյակները նպատակասլաց ու կանոնավոր կազմակերպելու գործում, ինչպես և պարզաբանում էին դրանց դերն ու խնդիրները քայքայված տնտեսության վերականգնման գործում[9]։ Ղարաբաղում տեղակայված 28-րդ դիվիզիային կից ևս ստեղծվեց շաբաթօրյակների բյուրո, որի նախաձեռնությամբ զինվորները կիրակի օրերը օգնում էին գյուղատնտեսական աշխատանքներին։ Շուշի քաղաքում սիստեմատիկ անց էր կացվում «վիրավորված զինվորների օգնության օր»[10]։

1920 թ. աշնան կեսերին տեղամասային և գյուղական հեղկոմներն արդեն կատարել էին իրենց ֆունկցիաները։ Հարկավոր էր անցնել տեղական ընտրովի օրգանների ստեղծմանը։ Այդ նոր ընտրովի օրգանները գյուղերում պետք է իրագործեին տնտեսական և քաղաքական խնդիրներ։ Այդպիսի օրգաններ հանդիսացան շքավորական կոմիտեները, որոնց ստեղծման գործում հաշվի առնվեցին Սովետական Ռուսաստանի փորձը և հանրապետության ինքնատիպ վիճակը։ Կուլակները նշանակալից ուժ էին, շատ գյուղերում բընակչության զգալի մասը դեռևս գտնվում էր կուլակների ազդեցության տակ,

---

9 Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի մարզային արխիվ (հետագայում՝ Մարզային արխիվ), ֆ. 345, ց. 1, գ. 3, թ. 171։

10 ՄԼԻ-ի ադրբեջանական մասնաճյուղի արխիվ, ֆ. 1, ց. 85, գ. 53, թ. 14։

իշխում էին նահապետական սովորությունները։ Չքավորական կոմիտեների ստեղծումը մյուս կողմից նպաստեց չքավորների հեղինակությունը գյուղերում բարձրացնելուն։

Հոկտեմբերի վերջին տեղի ունեցած Ադրբեջանի կոմունիստական կուսակցության երկրորդ համագումարն, ընդգծելով տվյալ ժամանակաշրջանում չքավորական կոմիտեներին անցնելու անհրաժեշտությունը, խնդիր դրեց նրանց առջև հետևողականորեն իրագործել հողի վերաբերյալ Ադրհեղկոմի դեկրետը, շարունակել խանների, բեգերի և կալվածատերերի նկատմամբ կիրառվող սեփականազրկման քաղաքականությունը, չքավորներին քաղաքական ակտիվ կյանքի կոչել, միջակին ամբողջովին քաշել սովետական իշխանության կողմը և գավառներում սովետների ընտրություններին անցնելու պայմաններ ստեղծել[11]։

Լեռնային Ղարաբաղում չքավորական կոմիտեների ստեղծումն սկսվեց 1920 թ. հոկտեմբերի երկրորդ կեսից, և մեկ ամսվա ընթացքում երկրամասի բոլոր գյուղերում արդեն կային չքավորական կոմիտեներ։

Չքավորական կոմիտեների գործունեությունը պայմաններ ստեղծեց, որպեսզի 1921 թ. գարնանից իրականացվեն սովետների ընտրությունները։ Ջրաբերդում և Խաչենում սովետների ընտրություններն անցկացվեցին ապրիլի առաջին կեսին, իսկ Վարանդայում և Դիզակում՝ երկրորդ կեսին։ Նախ ընտրվեցին գյուղական, ապա տեղամասային սովետներ։ Դիզակում և Վարանդայում սովետների ընտրություններին մասնակցեցին նաև կարմիրբանակայինները[12]։

Ապրիլի վերջին տեղի ունեցան Ղարաբաղի տեղամասային և գավառային սովետների ընտրությունները։ Այդ առաջին ընտրություններին մասնակցեց 70.000 մարդ[13]։ Կազմակերպված 140 գյուղական սովետների կազմում ընտրվեց աշխատավորների ավելի քան 1500 ներկայացուցիչ։ Սովետները մեծ դեր խաղացին երկրամասի քայքայված տնտեսությունը վերականգնելու, աշխատավորներին տեղական օրգանների շուրջը համախմբելու, կուլտուրական վերափոխումների մեծ ծրագիրն իրագործելու և մասսաների քաղաքական դաստիարակության ուղղությամբ։ Նրանց գործունեությանը մեծապես նպաստեցին գյուղական աշխատավորների համագումարները (Խաչենում, Վարանդայում, Ջրաբերդում և Դիզակում), որոնք հիմնականում քննարկում էին հողային կոմիտեներին և սովետներին աջակցելու վերաբերյալ հարցերը։

1923 թ. հուլիսի 9-ին հանրապետական թերթերում հրատարակվեց Ադրբկենտգործկոմի նախագահի տեղակալ Մ. Բ. Կասումովի ստորագրած դեկրետը՝ «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ կազմելու մասին»։ Հուլիսի 24-ին հատուկ դեկրետով Ղարաբաղի գործերի գծով կոմիտեն, որը ստեղծվել էր 1922 թ. դեկտեմբերին, վերացվեց և նրա փոխարեն ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի ժամանակավոր հեղափոխական կոմիտե։ Նրա կազմի մեջ մտնում էին Արմենակ Ղարագյոզյանը (նախագահ), Բ. Բունիաթովը, Գ. Կաֆիևը, Ս. Մանուչյանը, Մ. Ջալյանը։ Մինչև սովետների առաջին համագումարի հրավիրումը, հեղկոմը հանդիսանում էր Լեռնային Ղարաբաղի պետական բարձրագույն օրգանը։

---

11 Резолюции II съезда АКП(б), Баку, 1920, էջ 10։

12 Մարզային արխիվ, ֆ. 3, ց. 1, գ. 60, թ. 111։

13 Նույն տեղում, ֆ. 485, ց. 1, գ. 8, թ. 53։

Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու դեկրետի համաձայն, ստեղծվեց իսոր հանձնաժողով՝ Լեռնային Ղարաբաղի, Քրդստանի (այժմ Լաչինի շրջան), Ադր. ՍՍՀ կենտրոնական իշխանության ներկայացուցիչներից, որը պետք է մինչև օգոստոսի 15-ը մշակեր մարզի կանոնադրությունը, որոշեր նրա սահմանները։

Հանձնաժողովի որոշմամբ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի մեջ մտան Շուշիի գավառի երկու տեղամասերի, Ջիվանշիրի և Ջեբրայիլի գավառների լեռնային մասի գյուղերը։ Կազմվեց չորս շրջան՝ Ջրաբերդի (կենտրոնը՝ Մարտակերտ), Խաչենի (կենտրոնը՝ Խանքենդի), Վարանդայի (կենտրոնը Ճարտար) և Դիզակի (կենտրոնը՝ Հադրութ)։ Մեկ տարի անց կազմվեց 5-րդ շրջանը, Շուշի կենտրոնով[14]։ 1923 թ. սեպտեմբերի 20-ին, ի պատիվ Ստեփան Շահումյանի, Խանքենդին վերանվանվեց Ստեփանակերտ և դարձավ մարզի կենտրոնը։

Լեռնային Ղարաբաղի ժամանակավոր հեղկոմը օգոստոսի 1-ից սկսեց իր գործունեությունը։ Նրա առջև խնդիր էր դրված արագացնել երկրամասի քայքայված տնտեսության վերականգնումը, բավարարել աշխատավորների պահանջները, ամրապնդել սովետական իշխանության տեղական օրգանները, նախապատրաստել մարզային սովետների առաջին համագումարը, կազմակերպել և հաջողությամբ ավարտել մրգի հավաքումը, կազմ ու պատրաստ սկսել աշնանացանը, ձեռնարկել անգործության մատնված մետաքսագործական ֆաբրիկաների նորոգման աշխատանքները, հավաքել պարենհարկը, կազմակերպված դիմավորել ուսումնական նոր տարին և այլն։ Առավել հրատապ էր հողային հարցը։ Անհրաժեշտ էր ապահովել գյուղատնտեսության բարձր կուլտուրան, սերտ կապ ստեղծել կենտրոնի և տեղերի միջև, հոգալ հողագործների բժշկական կարիքները, խրախուսել մշակութային ամեն մի միջոցառում, կենդանություն տալ կոոպերացիային[15]։

Մարգի աշխատավորները ջերմորեն արձագանքեցին հեղկոմի միջոցառումներին։

1923 թ. օգոստոսի 4-ին ստեղծվեց ԼՂԻՄ ներքին գործերի կոմիսարիատ, 15-ին ստեղծվեցին ժողովրդական դատարաններ մարզի բոլոր շրջաններում։ Նույն ամսին հեղկոմին կից ստեղծվեց աշխատանքային բաժին։

Հեղկոմը և մարզկոմը նախապատրաստվում էին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի սովետների առաջին համագումարին։ Գյուղսովետների ընտրությունները տեղերում սկսվեցին հոկտեմբերի 5-ից։

Հոկտեմբերի 28-ին տեղի ունեցան Դիզակի և Ջրաբերդի, 31-ին Վարանդայի, իսկ նոյեմբերի 5-ին Խաչենի սովետների շրջանային համագումարները, որոնք քննարկեցին միևնույն հարցերը՝ միջազգային դրության մասին, հեղկոմի դեկուցումը, շրջանի բյուջեն, կոոպերացիայի մասին և ընտրություններ։ Բոլոր շրջանային գործադիր մարմիններն ընտրվեցին միաձայն։ Գործադիր կոմիտեների կազմերում ընտրվածների 95 տոկոսը կոմունիստներ էին։

---

14 1925 թ. Վարանդայի կենտրոնը տեղափոխվեց Մարտունու ավանը։ 1927 թ. նոյեմբերի 11-ին Խաչենի շրջանը վերանվանվեց Ստեփանակերտի շրջան, Վարանդայինը՝ Մարտունու (ի պատիվ Ալ. Մյասնիկյանի՝ «Մարտունի»)։ 1932 թ. նոյեմբերի 5-ին Ջրաբերդի շրջանն անվանվեց Մարտակերտի շրջան, իսկ Դիզակինը՝ Հադրութի։

15 «Խորհրդային Ղարաբաղ», 1923, № 1։

1923 թ. նոյեմբերի 6-ին, ցերեկվա ժամը 12-ին, Ստեփանակերտի կուսակցական դպրոցի շենքում բացվեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի սովետների առաջին համագումարը։ Համագումար էին եկել 132 պատգամավոր։ Բացման ճառով հանդես եկավ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի ժամանակավոր հեղկոմի նախագահ Արմենակ Ղարագյոզյանը։ Ադրբեջանի Կ(բ)Կ Կենտկոմի, կենտգործկոմի և ժողկոմսովետի անունից ողջույնի ճառով հանդես եկան Իլդիրիմ Զինգիզը և Համիդ Սուլթանովը։ Վերջինս իր ճառում ընդգծեց Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու նշանակության և երկու ժողովուրդների բարեկամական կապերի ամրապնդման կարևորությունը։ Նա հայտարարեց, որ Ադրբեջանի կառավարությունը Լեռնային Ղարաբաղին նվիրել է 20 հազար փութ նավթ, 20 հազար արշին բյազ, մեկ տպարան[16]։

Համագումարը բարձր գնահատեց ժամանակավոր հեղկոմի երեք ամսվա աշխատանքները և առաջարկեց ապագա մարզային գործադիր կոմիտեին՝ սակավահող բոլոր գյուղացիներին բավարարել հողով, բարձրացնել գյուղատնտեսական աշխատանքի արտադրողականությունը, լայն ասպարեզ տալ աշխատանքային դպրոցներին, առաջիկա մի քանի տարվա ընթացքում վերացնել անգրագիտությունը, վերականգնել շերամապահությունը, մետաքսամանվածքային արդյունաբերությունը, զարգացնել առևտուրը, անցկացնել նոր ճանապարհներ և վերանորոգել քանդվածները։

Համագումարը հանձնարարեց ապագա մարզգործկոմին նաև լայն աջակցություն ցույց տալ կոոպերացիաներին, կազմակերպել սպառողական և գյուղատնտեսական արտադրական կոոպերատիվներ, զարկ տալ վարկային կոոպերացիային[17]։ Համագումարն անհրաժեշտ համարեց կոնկրետ և հաշվենկատ կերպով զբաղվել սովետական առևտրի հարցով և հեղափոխական պայքար տանել սպեկուլյանտների և խաբեբաների դեմ։ Որոշվեց խոշորացնել գյուղական սովետները։ Այդ նույն օրը, նոյեմբերի 6-ին, համագումարի պատգամավորների և Ստեփանակերտի բնակիչների ու հարևան գյուղերից եկած գյուղացիների ներկայությամբ, հանդիսավոր կերպով բացվեց Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումը։

Համագումարը ընտրեց Լեռնային Ղարաբաղի մարզսովետի և գործկոմի կազմ՝ 25 անդամներից և 7 թեկնածուներից։ Մարզսովետի կենտգործկոմի կազմի մեջ ընտրվեցին՝ Ա. Ղարագյոզյանը (նախագահ), Բ. Բունիաթովը, Մ. Մանուցյանը, Ա. Քեթիկյանը, Ա. Արզանյանը և Ա. Զարուբյանը։

Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի նորընտիր մարզային սովետը դարձավ մարզի բարձրագույն պետական օրգանը և իր ձեռքը վերցրեց մարզի տնտեսության սոցիալիստական վերափոխման և կուլտուրայի զարգացման գործը։ Կարճ ժամանակամիջոցում դպրոցների թիվն ավելացավ 29 տոկոսով և հասավ 102-ի, իսկ աշակերտների թիվն ավելացավ 64 տոկոսով և հասավ 7624-ի[18]։ Բացվեցին 65 լիկկայան, 19 ակումբ և խրճիթ-ընթերցարան, երկրորդ աստիճանի դպրոցներ՝ Շուշիում և Հադրութում, կուսակցական դպրոց՝ Ստեփանակերտում և այլն։

---

16 «Կոմունիստ», 1923, № 174։

17 «Խորհրդային Ղարաբաղ», 1923, № 11։

18 Մարզային արխիվ, ֆ. 18, ց. 1, գ. 139, թ. 91։

Մարդի կյանքում մեծ իրադարձությունն էր Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարդի սահմանադրության հրապարակումը 1924 թ. հուլիսին։ Ըստ սահմանադրության, մարդի բարձրագույն օրգանը համարվում էր սովետների համագումարը, որը հրավիրվում էր ոչ պակաս, քան տարին մեկ անգամ։ Համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում իշխանությունն իրագործում էր Մարզսովետի կենտրոնական գործադիր կոմիտեն։ Ըստ սահմանադրության, մարզում ստեղծվեց ժողովրդական կոմիսարների խորհուրդ։ Կենտգործկոմի նախագահը միևնույն ժամանակ հանդիսանում էր ժողկոմխորհի նախագահ։ Կենտգործկոմին կից ստեղծվեցին հետևյալ բաժինները՝ լուսավորության, առողջապահության, երկրագործության, վիճակագրական, ներքին գործերի, սոցիալական ապահովության, ժողտնտխորհի, կոմունալ տնտեսության, դինվորական։ Ստեղծվեցին նաև աշխատանքի ֆինանսների և բանվորագյուղացիական տեսչություններ, արտակարգ հանձնաժողով և այլն։ Արդյունաբերական ձեռնարկությունները հանձնվեցին տնտխորհին։

1924—1925 թթ. գյուղական և շրջանային սովետների ընտրություններն անցան աշխատավորության մեծ ակտիվության պայմաններում և դեմոկրատական հիմունքներով։ Արդեն 1925 թ. մարզում կար 175 գյուղական սովետ՝ 4268 սովետների անդամներով, որոնցից 795-ը կին[19]։

Սահմանադրության համաձայն 1924 թ. նոյեմբերի 26-ին ստեղծվեց ԼՂԻՄ ժողովրդական կոմիսարների խորհուրդ։ Ժողկոմխորհը ղգալի դեր խաղայ մարդի տնտեսության սոցիալիստական վերափոխման և կուլտուրական հեղափոխության իրագործման ասպարեզում։ Նույն թվականի նոյեմբերի 26-ին ստեղծվեց ԼՂԻՄ դատախազությունը։ Դատախազություններ ստեղծվեցին նաև շրջաններում։

Այսպիսով, արդեն 1925 թ. Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում ստեղծվել էին վարչա-տնտեսական անհրաժեշտ բոլոր օրգանները։ Դրանով իսկ Լեռնային Ղարաբաղում ավարտվեց սովետական շինարարության դժվարին էտապը։

СОВЕТСКОЕ СТРОИТЕЛЬСТВО В НАГОРНОМ КАРАБАХЕ (1920—1925 гг.)

Г. Б. АБРАМЯН

Резюме

В мае 1920 г. в Нагорном Карабахе была установлена Советская власть. До середины осени функции руководящего органа на местах осуществляли ревкомы, а со второй половины осени до конца апреля 1921 г.—комбеды, после чего руководство перешло к Советам.

7-го июля 1923 г. декретом ЦИК-а Аз. ССР нагорная часть Карабаха была преобразована в автономную область. До созыва Первого областного съезда Советов временно был создан областной ревком, который вел большую работу в деле подготовки съезда. 6-го ноября 1923 г. состоялся Первый областной съезд Советов. До 1925 г. были созданы все необходимые областные и районные государственные и административные органы.

19 ՏԼՂ ՄԼԻ-ի ադրբեջանական մասնաճյուղի արխիվ, ֆ. 89, ց. 1, գ. 297, թ. 31։